## ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆՈՐ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

*Պատմաբանների հայկական ընկերության նախագահությունը 1991 թ. դեկտեմբերի 25-ին քննարկել է ՀՀ լուսավորության նախարարության կողմից հայոց պատմության նոր դասագրքերի և ծրագրերի վիճակը և գտել, որ այդ բնագավառում գործերի վիճակն անմխիթար է։ Ընկերության նախագահությունը, ելնելով նրանից, որ դպրոցական դասագրքերի ստեղծման գործին պետք է ցույց տրվի պետական մոտեցում, դիմել է ՀՀ Պետական նախարար Գ. Արեշյանին՝ խնդրելով «Հայոց պատմության դպրոցական դասագրքերի և ծրագրերի ստեղծման» հարցը դարձնել հատուկ քննարկման նյութ և վերջ դնել այդ բնագավառում տիրող կամայականություններին։*

*Նման որոշումներ են ընդունել նաև ՀԳԱ պատմության ինստիտուտն ու ՀԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի բյուրոն, որոնցում դժգոհություն է հայտնվել այն կապակցությամբ, որ լուսավորության նախարարությունը (նախկին նախարար՝ Ա. Գրիգորյան) առանց մրցույթի և լուրջ մասնագիտական քննարկումների, շրջանցելով բոլոր պատմագիտական հիմնարկները, գրքեր է երաշխավորել հրատարակության՝ որպես դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ, ելնելով խմբակային շահերից ու սուբյեկտիվ նախասիրություններից։*

*Ընկերության նախագահության որոշումից կես տարի հետո «Անկախություն» թերթում (1992, № 50, խմբագիր՝ Վահան Իշխանյան) լույս տեսավ պ. Ռ. Իշխանյանի հոդվածը, որում հեղինակը, ինչպես միշտ, այս անգամ ևս դիմում է կեղծիքների և զրպարտությունների՝ նպատակ ունենալով վարկաբեկել պատմագիտական հիմնարկների ղեկավարներին, փորձելով սողանցք գտնել իր՝ պատմագիտության հետ ոչ մի առնչություն չունեցող «Պատկերազարդ պատմություն հայոց» գիրքը դպրոցին պարտադրելու համար։ Հոդվածի հիմքում ընկած է հեղինակի շահադիտական նպատակների պաշտպանությունը, քանի որ Ռ. Իշխանյանը հեղինակային հոնորարներ է ստացել և դեռ պետք է ստանա իր «Պատմության» երեք մասերը 175 հազար տպաքանակով հրատարակելու համար։*

*Հարց է առաջանում, իսկ ով է Ռ. Իշխանյանը, որն անպատիժ կերպով տարիներ շարունակ վարկաբեկում է հայոց պատմագիտական բոլոր հիմնարկները, հայհոյում, մերժում և սպառնում բոլոր նրանց, ովքեր համաձայն չեն իր անհեթեթ տեսակետների հետ ու փորձում են պատմագիտությունը և դպրոցը փրկել ամենամիջակ դիլետանտից։ Ռ. Իշխանյանը մարտնչող միջակության փայլուն ներկայացուցիչներից է, որը ճարպկորեն օգտագործելով մեր պատմության անցման շրջանի օբյեկտիվ և սուբյեկտիվ առանձնահատկությունները, կարողացել է բարձրանալ Ղարաբաղյան շարժման ալիքների վրա և տարիներ շարունակ մրոտել հայոց պատմության փայլուն դրվագներից շատերը։ Գիտության ամենամեծ թշնամին մարտնչող միջակությունն է, որն ունենալով անհագուրդ փառասիրություն, բայց զուրկ լինելով մտավոր բարձր ընդունակություններից, իր նպատակին հասնելու համար օգտագործում է բոլոր հնարավոր և անհնարին անբարոյական միջոցները։ Նորից թերթատելով վերջին տարիների մամուլը, կարդացեք Իշխանյանի հավակնոտ, սանձարձակ հոդվածները և դուք կհամոզվեք, որ նրանց հեղինակը տառապում է փառասիրության և մեծամտության կոմպլեքսով (նա իրեն համեմատում է Չամչյանի և Լեոյի հետ), որը ցավոք լուրջ և անբուժելի հիվանդության արտահայտություն է։ Եվ տարօրինակն այն է, որ թերթերը դեռ շարունակում են տպագրել գիտության քողով վարագուրված այդ հոդվածները, որոնք զրպարտչագրերի բնույթ ունեն, իսկ գիտնականները իզուր ժամանակ վատնելով շարունակում են հերքել, պաշտպանվել կամ էլ հարձակվել։*

*Նման անբնական երևույթ հնարավոր է միայն ժողովրդի պատմության անցումային շրջանում։ Բայց անցման շրջանի խառնակ վիճակը, միտինգային գիտության ակտիվությունը, դիլետանտիզմի և մարտնչող միջակության հաղթարշավը ի վերջո հավերժ չեն։ Հետևաբար ամեն ինչ ընկնում է իր տեղը, ժողովուրդը սկսում է հասկանալ, թե ով ով է։ Գիտու-*

թյունն ունի զարգացման իր օրենքները, իսկ դիլետանտիզմը՝ իր, դրանք ոչ մի առնչություն չունեն։

Վերջերս անցի ունեցավ Երևանի պետական համալսարանի գիտական մեծ խորհրդի նիստը, որտեղ Ռ. Իշխանյանը պետք է վերընտրվեր բանասիրական ֆակուլտետի պրոֆեսորի պաշտոնում։ Համալսարանի մեծ խորհուրդը ձայների ջախջախիչ մեծամասնությամբ (37 դեմ, 8 կողմ) նրան հեռացրեց աշխատանքից, զրկելով ֆակուլտետում դասախոսելու իրավունքից։

Գիտական մեծ խորհուրդը դիմեց այդ քայլին՝ չավ իմանալով, որ հիմա էլ ինքը պետք է իշխանյանականների կողմից դառնա վարկաբեկման թիրախ։ Եվ ահա, արդեն երկու հոդված է լույս տեսել համալսարանի դեմ։

Հայաստանի Հանրապետության բոլոր պատմագիտական հիմնարկները և Երևանի պետական համալսարանը այդ բազմափնշակ մարդու և նրա գիտական մարզանքների մասին ունեն միանշանակ բացասական կարծիք։

Հայոց պատմագիտությունը մտել է իր պատմության նոր փուլը։ Պատմությունը (հատկապես նրա նոր ու նորագույն շրջանը) պետք է գրվի նորից ու նորովի։ Վերջին 70 տարվա պատմագիտական ժառանգությունից շատ բան նոր փուլում քննություն չի բռնելու Ժամանակը կատարում է իր անողոք և արդարացի ընտրությունը, բազմաթիվ պատմաբաններ դուրս են նետվել պատմագիտության բնապատկերից, քչերն են շարունակում իրենց աշխատանքը և, որ ամենակարևորն է, աստիճանաբար հրապարակ է դուրս երիտասարդ գիտնականների նոր սերունդը, որին և վիճակված է ասելու վճռական խոսքը։ Այսօր պատմաբանների մի մեծ բանակ է աշխատում Հայաստանի պատմագիտական և բարձրագույն ուսումնական հիմնարկներում և միայն նորին մեծություն ժամանակը ցույց կտա, թե նրանցից ո՞վ է արդի փուլում քննություն բռնելու։ Մի բան անվիճելի է, որ այդ ընտրության չափանիշը լինելու է կատարված աշխատանքը, իսկ գնահատողը՝ պատմագիտությունը և ոչ թե դատավորի գեր ստանձնած դիլետանտները, հանձին իշխանյանների։

Ամենափեշակներն ի վիճակի չեն հասկանալու այն տարրական ճշմարտությունը, որ արմատական փոփոխությունների մեր ժամանակաշրջանում, անկախ նրանից թե ո՞վ է մնալու կամ հեռանալու պատմագիտությունից, ինչպես է գնահատվելու անցյալի պատմագիտական ժառանգությունը, գիտության մեջ հիմնական ռեմբը խղել է և պետք է լինի պրոֆեսիոնալը։

Պատմաբանների հայկական ընկերությունը տվյալ դեպքում մտահոգում է ոչ այնքան պատմագիտության բնագավառում ստեղծված իրավիճակը, դիլետանտների ջուր պղտորելը, այդ ամենը ժամանակին իր տեղը կընկնի, այլ այն, որ դիլետանտները զարտուղի ճանապարհներով, շրջանցելով գիտական հիմնարկները, փորձում են իրենց գրքերը պարտադրել դպրոցին՝ որպես դասագրքեր և ուսումնական օժանդակ ձեռնարկներ։

Պատմաբանների հայկական ընկերությունը խորապես համոզված է, որ ՀՀ կառավարությունը և լուսավորության նախարարությունն այդ հարցը քննարկման նյութ կդարձնեն և կստեղծեն մի մեխանիզմ՝ դպրոցական նոր դասագրքերի և ծրագրերի ստեղծման գործը կարգավորելու, դպրոցը սիրողական արշավանքից փրկելու համար։ Ինչքան մեզ հայտնի է, այդ ուղղությամբ որոշ աշխատանքներ արդեն կատարվել են, որը և առաջացրել է դիլետանտների զայրույթը և պատճառ դարձել Իշխանյանի «Անկախություն» թերթում հրատարակված հոդվածի։

Անհրաժեշտ ենք համարում ընթերցողի ուշադրությանը ներկայացնել Պատմաբանների հայկական ընկերության որոշումը՝ Հայաստանի Հանրապետությունում հայոց պատմության նոր դպրոցական դասագրքերի և ծրագրերի ստեղծման վիճակի մասին։ Դպրոցը ժողովրդինն է և մենք պետք է ազգովին պարենք նրա հոգսերով։

ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ
Պատմաբանների հայկական ընկերության նախագահ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ
## ՊԱՐՈՆ Գ. Ս. ԱՐԵՇՅԱՆԻՆ

Նոր պատմական պայմաններում հայոց ազգային դպրոցը, որտեղ ձևավորվում է անկախ Հայաստանի ապագա քաղաքացին, պետք է գտնվի Հայաստանի Հանրապետության խորհրդարանի և կառավարության ուշադրության կենտրոնում։

Ազատագրված մարքս-լենինյան գաղափարախոսության դոգմաներից, ազգային դպրոցի աշակերտն իր գիտելիքները պետք է քաղի նոր տիպի դասագրքերից, որոնցում հանրամատչելի, պատկերավոր լեզվով պետք է տրվի հայոց պատմության գիտական շարադրանքը։

Դպրոցը պետք է լինի ապակուսակցական և միանգամայն զերծ խմբակային, թայֆայական պայքարի ոլորտներից։

Հայաստանի Հանրապետության խորհրդարանը և կառավարությունը պետք է իրենց ձեռքը վերցնեն դպրոցական նոր դասագրքերի ստեղծման գործի ղեկավարությունը, օգտագործելով ՀԳԱ պատմագիտական ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի և Հայկական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետների բոլոր արժանի ուժերը։ Դեռ ավելին, այդ նպատակով կարող են օգտագործվել նաև արտաքին և ներքին սփյուռքի պատմագիտական մտքի հնարավորությունները։

Պատմաբանների հայկական ընկերությունը Հայաստանի Հանրապետության խորհրդարանի և կառավարության առաջ բարձրացնում է այս կարևորագույն հարցը, որովհետև խիստ մտահոգված է այն բառիս բուն իմաստով խայտառակ վիճակով, որը տիրում է պատմության դպրոցական դասագրքերի և ծրագրերի ստեղծման գործում։

ՀՀ լուսավորության նախարարությունը (նախարար՝ Ա. Գրիգորյան) մեկ տարվա ընթացքում, շրջանցելով Հանրապետության ԳԱ պատմագիտական ինստիտուտները, համալսարանի և մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետները վարում է մի քաղաքականություն, որը ոչ մի առնչություն չունի պատմագիտության և կրթական գործի բնականոն ընթացքի հետ։

Այսպես, լուսավորության նախարար Ա. Գրիգորյանը 1991 թ. հունվարի 28-ի գրությամբ «Արևիկ» հրատարակչությանը պատվիրել է «որպես օժանդակ ձեռնարկ ճանրակրթական դըպրոցի աշակերտների համար» հրատարակել հետևյալ գրքերը.

«1. Ռ. Իշխանյանի «Պատկերազարդ պատմություն հայոց». 1-ին գիրքը՝ 70 հազար օրինակ, 2-րդ գիրքը՝ 55 հազար, 3-րդ գիրքը (ձեռագիրը կներկայացվի առաջիկա երկու ամսվա ընթացքում (50 հազար օրինակ)։

2. Բ. Ուլուբաբյանի «Ջրուցարանը» (1 գրքով) 25 հազար օրինակ։

3. Լ. Միրիջանյանի «Հայկյանները» գրքույկը՝ 10 հազար օրինակ։

4. Ս. Հարությունյանի «Հայ հին վիպաշխարհը»՝ 20 հազար օրինակ»։ Այնուհետև նախարարը, սույն թվականի ապրիլի 8-ին, «Արևիկ» հրատարակչության տնօրենին գրել է. «Խնդրում ենք, ընդունված կարգի համաձայն, պարբերաբար՝ ամիսը 2 անգամ, լուսավորության նախարարությանը տեղեկացնել նշված գրքերի հրատարակման ընթացքի մասին։ Խընդրում ենք նկատի ունենալ, որ Ռ. Իշխանյանի և Բ. Ուլուբաբյանի գրքերը փոխարինելու են «Հայ ժողովրդի պատմության» դասագրքերին, հետևաբար պետք է հրատարակել մինչև նոր ուսումնական տարին»։

Ինչպես տեսնում ենք, լուսավորության նախարարության ընտրած չորս հեղինակներից մեկը լեզվաբան է, մյուսը՝ գրող-պատմաբան, երրորդը՝ բանաստեղծ, չորրորդը՝ բանասեր։

Մենք այն կարծիքին չենք, որ լեզվաբանը, բանասերը կամ բանաստեղծը իրավունք չունեն պատմության հարցերի շուրջ գրքեր գրելու։ Դեմոկրատական երկրում ամեն ոք ազատ է զբաղվելու իրեն հետաքրքրող հարցերով։

Բայց ով է լուսավորության նախարարությանը իրավունք տվել կամայականորեն, շրջանցելով պատմագիտական բոլոր հիմնարկները, առանց մրցույթի, առանց քննարկումների, ելնելով խմբակային շահերից, սուբյեկտիվ նախասիրություններից, այդ գրքերը որպես դասագրքեր ճանաչելու դպրոցներին:

Խոսքը հատկապես վերաբերում է Ռ. Իշխանյանի «Պատկերազարդ պատմություն հայոց» երեք հատորից բաղկացած գրքին, որը, ինչպես երևում է նախարարության և հրատարակչության գրագրությունից, առանց քննարկման և համապատասխան հանձնաժողովների կարծիքների, դեռ թանաքը չչորացած, ուղարկվում է տպարան։

Այդ այն դեպքում, երբ Ռ. Իշխանյանի «Պատկերազարդի» արդեն շրջանառության մեջ գտնվող առաջին հատորի մասին պատմագիտական հիմնարկների և առանձին պատմաբանների կողմից կան չափազանց լուրջ բացասական գրախոսականներ։

Իհարկե, վիճահարույց գրքեր միշտ էլ գրվել են, գրվում են և դեռ անպայման կգրվեն։ Բայց անվիճելի է, որ նման գրքերը երբեք չեն հանձնարարվում դպրոցին որպես դասագիրք կամ ուսումնական օժանդակ ձեռնարկ։

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ վերոհիշյալ հեղինակներից Ս. Հարությունյանի գիրքը օրինական կարգով ժողովրդական կրթության նախարարության ուսումնամեթոդական խորհրդի դեռևս 1990 թ. որոշմամբ երաշխավորվել էր հրատարակության որպես ուսումնական ձեռնարկ։

Չենք կարող շրջանցել նաև լուսավորության նախարարության կոլեգիայի ս. թ. սեպտեմբերի 9-ին հաստատած՝ պատմական առարկաների ուսուցման «Հայեցակարգը», որում կոլեգիան նորից թելադրանքներ է անում պատմաբաններին, թե ինչ պիտի պարունակի և ինչ՝ չպարունակի դպրոցական նոր դասագրքերը։ Թողնելով այդ «Հայեցակարգի» ըստ էության քննարկումը այլ առիթի, նշենք, նախ, որ դրանցում հանրահայտ ճշմարտություններն սերտորեն միահյուսվում են անգիտության ապշեցուցիչ դրսևորումների հետ և, երկրորդ, որ դրանք, իրենց բիրտ պահանջկոտությամբ, ոչնչով չեն տարբերվում մարքսիստական դոգմաների մեր թոթափած լծից և գալիս են կրկին փոխարինելու դրանց։

Մի կարևոր հանգամանք ևս։ Ժողովրդական կրթության մինիստրությունը դեռևս 1990 թ. մրցույթ էր հայտարարել հայ ժողովրդի պատմության դպրոցական ծրագիր կազմելու համար։ Մրցութային հանձնաժողովին ներկայացվել էին մի քանի ծրագրեր։ Մրցութային հանձնաժողովը առաջնությունը տվել էր համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի կազմած ծրագրին։ Ընդունվելուց հետո ծրագիրը հանձնվել էր «Լույս» հրատարակչությանը՝ տպագրելու համար։ Աշխատանք էր տարվում դպրոցական դասագրքի հեղինակային կոլեկտիվ ստեղծելու ուղղությամբ։ Դասագրքերը, բնականաբար, պետք է ստեղծվեին այլընտրանքային սկզբունքի հիման վրա և ընդունվեին միայն մրցույթի միջոցով։

Սակայն լուսավորության նախարարության ստեղծումից հետո, առանց որևէ բաց մրցության և քննարկումների, այդ ծրագիրը հանվեց տպագրության պրոցեսից։ Բնականաբար, որանից հետո կանգ առան նաև դասագրքերի ստեղծման ուղղությամբ կատարվող աշխատանքները։ Եվ այդ անօրինականությունը կատարվեց Ռ. Իշխանյանի գրքերի համար կանաչ ճանապարհ բացելու նպատակով։

Պատմաբանների հայկական ընկերությունը դիմում է Ձեզ, խնդրելով հայոց պատմության դպրոցական դասագրքերի և ծրագրերի ստեղծման հարցը դարձնել հատուկ քննարկման նյութ և վերջ դնել այդ բնագավառում տիրող կամայականություններին։

ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ
25 դեկտեմբերի 1991 թ.